

Ալիսա Ամիրխանյան

*ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական
և իրավական ապահովման վարչության ավագ դատախազ,
արդարադատության երրորդ դասի խորհրդական,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ*

**ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՏ
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԳՈՐԾԻՔ¹**

Համառոտագիր

Կոռուպցիան իր ամենատարբեր դրսևորումներով մշտապես եղել և մնում է հասարակության լայն շերտերին անհարմարություն և անհանգստություն պատճառող, քաղաքացիների շրջանում վրդովմունքի, անապահովության և անարդարության զգացումներ առաջացնող երևույթ, որը ծնում է ապօրինությունների ու ամենաթոշողության միջավայր՝ արժեզրկելով ինչպես անհատի իրավունքների համալիրն ու արժանապատիվ կեցությունը, այնպես էլ հեղինակագրկելով պետությունը ու սպառնալիք ստեղծելով պետականության հիմքերի համար:

Վերջին տարիներին մեր երկրում տեղի ունեցած հասարակական-քաղաքական իրադրության փոփոխման արդյունքում կոռուպցիայի դեմ պայքարը կապված կոռուպցիային հակազդելու աննախադեպ քաղաքական կամքի առկայության հետ, նոր թափ և բովանդակություն է ձեռք բերել: Ըստ այդմ, Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի կանխարգելումը և դրա դեմ պայքարը հռչակվել են որպես ռազմավարական նշանակություն ունեցող առաջնահերթություններ:

Նման պայմաններում կարևորվում է կոռուպցիայի դեմ պայքարի միջազգայնորեն ընդունված նոր գործիքների ներդրումը, և դրանց շարունակական կատարելագործումը՝ միաված կոռուպցիայի հակազդմանն ինչպես քաղաքացիաիրավական, վարչաիրավական, այնպես էլ քրեաիրավական հարթություններում:

Այս համատեքստում ավելի քան կարևորվում է ապօրինի հարստացման հանցակազմի վերլուծությունը՝ հաշվի առնելով դրա՝ մեր իրավական համակարգի համար նոր և դեռևս բավարար չափով ուսումնասիրված չլինելը:

Հոդվածում փորձ է արվել հիմնավորել ապօրինի հարստացման դեմ քրեաիրավական միջոցներով պայքարելու անհրաժեշտությունը՝ ՀՀ-ում կոռուպցիայի

¹ Հոդվածը ներկայացվել է 12.05.2023թ., գրախոսվել է 10.10.2023թ.:

ընկալման, դրա մակարդակի և տարածվածության, ՀՀ-ի ստանձնած միջազգային պարտավորությունների, միջազգային լավագույն փորձի, ՀՀ-ում ապօրինի հարստացման դեմ այլ՝ ոչ քրեաիրավական միջոցներով պայքարելու հնարավորության և արդյունավետության համատեքստում: Ըստ այդմ, հողվածում անդրադարձ է կատարվում ՀՀ-ում ապօրինի հարստացման քրեականացման անհրաժեշտությանը, ներկայացվում է ապօրինի հարստացման քրեականացմանը կողմ և դեմ ներկայացվող հիմնական փաստարկները, ինչպես նաև եզրահանգումներ՝ ՀՀ-ում ապօրինի հարստացման քրեականացման հիմնավորվածության առնչությամբ:

Հիմնաբառեր- ապօրինի հարստացում, կոռուպցիայի դեմ պայքար, քրեականացում, անմեղության կանխավարկած, ապօրինի ծագում ունեցող գույք:

Ներածություն

Կոռուպցիան իր ամենատարբեր դրսևորումներով մշտապես եղել և մնում է հասարակության լայն շերտերին անհարմարություն և անհանգստություն պատճառող, քաղաքացիների շրջանում վրդովմունքի, անապահովության և անարդարության զգացումներ առաջացնող երևույթ, որը ծնում է ապօրինությունների ու ամենաթողության միջավայր՝ արժեզրկելով ինչպես անհատի իրավունքների համալիրն ու արժանապատիվ կեցությունը, այնպես էլ հեղինակազրկելով պետությունն ու սպառնալիք ստեղծելով պետականության հիմքերի համար:

Վերջին տարիներին մեր երկրում տեղի ունեցած հասարակական-քաղաքական իրադրության փոփոխման արդյունքում կոռուպցիայի դեմ պայքարը՝ կապված կոռուպցիային հակազդելու աննախադեպ քաղաքական կամքի առկայության հետ, նոր թափ և բովանդակություն է ձեռք բերել: Ըստ այդմ, Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի կանխարգելումը և դրա դեմ պայքարը հռչակվել են որպես ռազմավարական նշանակություն ունեցող առաջնահերթություններ:

Նման պայմաններում կարևորվում է կոռուպցիայի դեմ պայքարի միջազգայնորեն ընդունված նոր գործիքների ներդրումը և դրանց շարունակական կատարելագործումը՝ միտված կոռուպցիայի հակազդմանն ինչպես քաղաքացիաիրավական, վարչաիրավական, այնպես էլ քրեաիրավական հարթություններում:

Այս համատեքստում ավելի քան կարևորվում է ապօրինի հարստացման հանցակազմի վերլուծությունը՝ հաշվի առնելով դրա՝ մեր իրավական համակարգի համար նոր և դեռևս բավարար չափով ուսումնասիրված չլինելը:

Սույն հողվածի շրջանակներում փորձ է արվել անդրադառնալ ՀՀ-ում ապօրինի հարստացման քրեականացման անհրաժեշտությանը, քրեականացմանը կողմ և դեմ ներկայացվող հիմնական փաստարկներին՝ ՀՀ-ում կոռուպցիայի ընկալման, դրա մակարդակի և տարածվածության, ՀՀ-ի ստանձնած միջազգային

պարտավորությունների, ապօրինի հարստացման դեմ այլ՝ ոչ քրեաիրավական միջոցներով պայքարելու հնարավորության համատեքստում:

Ըստ այդմ, աշխատանքի հիմնական նպատակն ապօրինի հարստացման՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի գործիքի վերլուծությունն է վերոնշյալ համատեքստում:

Ապօրինի հարստացումը՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի գործիք

Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարը ռազմավարական նշանակություն ունեցող առաջնահերթություն է: Վերջին տարիներին մեր երկրում տեղի ունեցած հասարակական-քաղաքական իրադրության փոփոխման արդյունքում կոռուպցիայի դեմ պայքարը՝ կապված կոռուպցիային հակազդելու աննախադեպ քաղաքական կամքի առկայության հետ, նոր թափ և բովանդակություն է ձեռք բերել: Ըստ այդմ, կոռուպցիայի դեմ առավել թիրախավորված և արմատական պայքար մղելը, կոռուպցիայի հանրային մերժումն ու կոռուպցիայից զերծ հանրությունը ՀՀ կառավարության ռազմավարական նպատակներն են, որոնք իրենց արտացոլումն են գտել այդ թվում ՀՀ կառավարության ծրագրում²:

ՀՀ-ում ապօրինի հարստացման համար պատասխանատվության միջոցների ներդրման առաջին քայլերը կատարվել են դեռևս 2014 թվականին, երբ նույն թվականի մայիսի 22-ին ՀՀ Ազգային ժողովը հաստատեց ՀՀ կառավարության ծրագիրը 2014-2017թթ.-ի համար: Ծրագրի 2.3 բաժնում «Մարդու իրավունքների պաշտպանության և արդարադատության արդյունավետ համակարգը» վերտառությամբ ներկայացված էր կառավարության կողմից իրականացվելիք հակակոռուպցիոն քաղաքականությունը, որը պետք է հիմնված լիներ կոռուպցիայի դեմ պայքարի նոր՝ վերախնամատարված տեսլականի վրա: Մասնավորապես, նշվում էր, որ «կմշակվեն և կներդրվեն «չհիմնավորված հարստացման», շահերի բախման, անհամատեղելի գործունեության և այլ սահմանափակումների բացահայտումն ու չեզոքացումը, ինչպես նաև էթիկայի կանոններով սահմանված պահանջների խախտման համար ներգործության միջոցների կիրառումն ապահովող գործուն կառուցակարգեր», իսկ «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը պարտավոր կլինի հայտարարագրերի չներկայացման, վարքագծի կանոնադրերի պահանջների՝ ներառյալ շահերի բախման կանոնների, «չհիմնավորված հարստացման» դեպքերի, անհամատեղելի գործունեության և այլ սահմանափակումների խախտում թույլ տված հանրային ծառայողների ու պաշտոնատար անձանց նկատմամբ իրավական ներգործու-

² Տե՛ս ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2019 թվականի ծրագիրը: Հասանելի է հետևյալ համացանցային հղումով՝ <https://www.gov.am/files/docs/3133.pdf> (մուտք՝ 11.05.2023):

թյան միջոցներ կիրառելու առաջարկություններ ներկայացնել իրավասու անձանց կամ մարմինների³»:

ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1141-Ն որոշմամբ հաստատված՝ «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018թթ. միջոցառումների ծրագիրը» և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ հաստատված՝ «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը» մեր երկրում հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական ուղղությունները նախանշող առանցքային փաստաթղթերն են:

«ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018թթ. միջոցառումների ծրագիրը» հակակոռուպցիոն քաղաքականության իրականացմանն ուղղված մի շարք ինստիտուցիոնալ բարեփոխումներ էր նախատեսում, այդ թվում՝ հանրային ծառայողների ու պաշտոնատար անձանց ակտիվների ու շահերի հայտարարագրման համակարգի բարելավում, կոռուպցիոն բնույթի իրավախախտումների քննության արդյունավետությունն ապահովող կառուցակարգերի ներդրում, կոռուպցիայի դեմ պայքարող մարմինների նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու և ամրապնդելու համար անհրաժեշտ գործուն միջոցների ձեռնարկում, ինչպես նաև **կոռուպցիոն բնույթի իրավախախտումների համար պաշտոնատար անձանց պատասխանատվության գործուն համակարգի ներդրում, կոռուպցիոն դրսևորումների համար կարգապահական, վարչական և քրեական պատասխանատվության միջոցների շարունակաբար կատարելագործում, որի շրջանակներում էլ նախատեսվում էր իրականացնել ապօրինի հարստացման քրեականացման նպատակահարմարության վերաբերյալ վերլուծություն:**

Ի կատարումն Հակակոռուպցիոն ռազմավարության 2015-2018թթ. միջոցառումների ծրագրի՝ ՀՀ-ում իրականացվեցին համակարգային նշանակություն ունեցող մի շարք օրենսդրական բարեփոխումներ, որոնք որոշակի նախադրյալներ ստեղծեցին հետագա հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետ իրականացման համար: Մասնավորապես՝

- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում ընդլայնվեց հայտարարագրման պարտականություն ունեցող սուբյեկտների շրջանակը,
- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում ներդրվեցին պատասխանատվություն նախատեսող դրույթներ՝ հայտարարատու պաշտոնատար անձի, ինչպես նաև նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի կողմից հայտա-

³ Տե՛ս ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2014-2017թթ. ծրագիրը հետևյալ համացանցային հղմամբ՝ <https://www.gov.am/files/docs/1321.pdf> (մուտք՝ 11.05.2023):

բարագրերը օրենքով և բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կողմից սահմանված պահանջների, կարգի և ժամկետների պահպանմամբ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով չներկայացնելու կամ հայտարարագիրը դիտավորությամբ չներկայացնելու կամ հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու համար՝ համապատասխան լրացումներ կատարելով նաև ՀՀ քրեական օրենսգրքում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում,

- 2017 թվականի հունիսի 9-ին ընդունվեց «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքներում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերի փայթեթը՝ ուղղված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ ազդարարող անձանց իրավական պաշտպանության երաշխիքների օրենսդրական ամրագրմանը և այլն:

Վերոնշյալ օրենսդրական բարեփոխումների համատեքստում էլ երկարատև ուսումնասիրությունների, քննարկումների ու բանավեճերի արդյունքում, ի վերջո, 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված ՀՕ-230-Ն օրենքով 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՕ-528-Ն քրեական օրենսգրքում (այսուհետ՝ Նախկին ԶՕ) կատարվեց լրացում, որով քրեականացվեց ապօրինի հարստացումը: Այսպես՝ Նախկին ԶՕ 310.1 հոդվածի համաձայն՝ **«Ապօրինի հարստանալը՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի՝ հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը, որոնք էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով, և եթե ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցագործության հատկանիշները բացակայում են՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ:**

2. Մույն հոդվածում էական է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը)»:

Արարքի քրեականացման անհրաժեշտությունը հիմնավորվում էր Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարմամբ և միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում ներկայացված օրինակներով⁴: Մասնավորապես՝ օրենքի նախագծին կից ներկայացված հիմնա-

⁴ Տե՛ս «Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի հիմնավորումը՝ հետևյալ համացանցային հղումով՝ <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=8445&Reading=0>: (մուսք՝ 11.05.2023):

վորման (այսուհետ՝ Հիմնավորում) մեջ Նախագծի հեղինակների կողմից վկայակոչվել են ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 20-րդ հոդվածը և մի շարք երկրներում ապօրինի հարստացման վերաբերյալ առկա կարգավորումները: Այսպես՝ ներկայացվել են Ուկրաինայի, Մոլդովայի, Լիտվայի, Սլովակիայի, Արգենտինայի, Պերուի, Ավստրալիայի, Իտալիայի, Ռուսաստանի օրենսդրական կարգավորումները կամ օրենսդրական լուծումները խնդրո առարկա հարցի վերաբերյալ՝ առանց, սակայն, անդրադառնալու դրանց արդյունքներին, վիճակագրությանը կամ իրավակիրառության արդյունավետությունը բնորոշող այլ չափորոշիչներին⁵:

Հիմնավորման մեջ Նախագծի հեղինակների կողմից որևէ ձևով անդրադարձ չի կատարվել նաև ապօրինի հարստացման հանրային վտանգավորության բնույթը, աստիճանը բնութագրող հատկանիշների վերլուծությանը, հիշյալ երևույթի դեմ այլ՝ ոչ քրեաիրավական միջոցներով պայքարելու անբավարարությանը, ինչպես նաև արարքների քրեականացման գործընթացում ուշադրության արժանի այլ հանգամանքներին: Այնինչ, յուրաքանչյուր արարքի քրեականացման հիմքում ընկած է, նախ և առաջ, արարքի հանրային վտանգավորության և արարքի նկատմամբ սոցիալական վերահսկողության այլ միջոցների համեմատությամբ դրա քրեականացման նպատակահարմարությունը: Արարքի քրեականացումը հասարակական հարաբերությունների կարգավորվածությունն ապահովող առավել ընդհանուր սոցիալական գործընթացի՝ սոցիալական վերահսկողության համակարգի տարր է: Տեսաբան-գիտնականների կողմից վաղուց արդեն առաջարկվել են հասարակական վտանգավորություն պարունակող վարքագծի քրեականացման սկզբունքները⁶:

Այսպես՝ քրեականացումը պետք է իրականացնել ոչ թե պահի ազդեցության տակ կամ մեկ կոնկրետ դեպքի առնչությամբ, այլ հաշվի առնելով արարքի քրեականացման անհրաժեշտությունը: Բացի այդ, արարքի քրեականացումն իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը: Մասնավորապես՝ պատճառված վնասի կարևորությունը, մեղքի ձևը արարքի հանրային վտանգավորության աստիճանը բնորոշող այն կարևոր հատկանիշներն են, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել արարքների քրեականացում իրականացնելիս: Կարևոր է հաշվի առնել նաև քրեականացվող արարքի դեմ վարչական կամ քաղաքացիաիրավական միջոցներով պայքարելու ոչ բավարար լինելը և այլն: Այս հատկանիշները կարող են դառնալ այն ցուցիչները, որոնց օգնությամբ կարելի է հանցավոր և իրենից բարձր հանրային վտանգավորություն ներկայացնող արարքները սահմանազատել ոչ հանցավոր արարքներից:

⁵ Տե՛ս նախորդ համացանցային հղումը:

⁶ Տե՛ս Кудрявцев В.Н. Уголовная политика и нормотворчество / В.Н. Кудрявцев // Уголовное право России. Общая часть: учебник / под ред. В.Н. Кудрявцева [и др.]. М.: Юрист, 2003., էջ 28-46:

Արարքի քրեականացման համար կարևոր նշանակություն ունի նաև հանրորեն վտանգավոր այս կամ այն արարքի տարածվածությունը, տվյալ արարքի նկատմամբ հանրության վերաբերմունքը: Եթե օբյեկտիվ իրականության մեջ առկա է իրավական բարիքներին էական վնաս պատճառող արարք, եթե տվյալ արարքը մարդկանց մեծ մասի կողմից դատապարտելի է կամ ընկալվում է որպես բարձր վտանգավորություն ունեցող, ապա դրա դեմ պայքարը քրեաիրավական միջոցներով դառնում է անհրաժեշտ:

Քրեականացումը կարող է պայմանավորված լինել նաև ստանձնած միջազգային պարտավորություններով, գորքայ գործընթացներով, գիտատեխնիկական առաջընթացով (մասնավորապես՝ կիբեռահանցավորություն, գենետիկայի, բժշկագիտության բնագավառում ներկայումս տարածում ստացող հանրավտանգ արարքներ, ահաբեկչության տարբեր դրսևորումներ և այլն): Քրեականացումը պայմանավորված է նաև հանրավտանգ արարքների այնպիսի նոր դրսևորումներով կամ դրանց հնարավորությամբ, որոնք հասարակական հարաբերություններում տեղի ունեցող գործընթացների հետևանք են: Մասնավորապես, այդպիսի նոր դրսևորումներ են առկա կամ կարող են ի հայտ գալ տնտեսական, ֆինանսական, ֆիսկալ հարաբերություններում:

Ընդ որում, քրեականացում իրականացնելիս պետք է հաշվի առնել արդեն նշված գործոնները՝ արարքի հանրային վտանգավորության աստիճանը, դրա տարածվածությունը, հասարակական հարաբերությունների զարգացման համար խոչընդոտ լինելը, այլ՝ **ոչ քրեաիրավական միջոցներով այդ արարքի դեմ պայքարի անարդյունավետությունը** կամ համանման հանրային վտանգավորություն ունեցող արարքների արդեն իսկ քրեականացված լինելու փաստը, ինչը ապացուցել է իր արդյունավետությունը: Քրեականացման համար կարևոր չափանիշ կարող է լինել նաև դատական պրակտիկան: Ներկայումս հանդիպում են դեպքեր, երբ իրավակիրառողը հնարավորություն չի ունենում հանրային բարձր վտանգավորություն ներկայացնող և ՔՕ-ով նախատեսված որևէ արարքին շատ նման դրսևորմանը համապատասխան քրեաիրավական գնահատական տալ, որովհետև այն քրեականացված չէ կամ համապատասխան հանցակազմը հստակ ձևակերպված չէ, ապահովված չէ իրավական որոշակիությունը: Փաստորեն առկա է օրենսդրական բացը: Նման դեպքերում հարցի լուծման եղանակը նման արարքները հստակ հատկանիշներով օրենքում նախատեսելն է:

«Ն»-ում ապօրինի հարստացման քրեականացման անհրաժեշտության առկայությանը կամ բացակայությանը հանգելու համար առաջարկում ենք նախ՝ վերոնշյալ չափանիշների հիման վրա վերլուծության ենթարկել դրա հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, ինչպես նաև անդրադառնալ հիշյալ երևույթի դեմ այլ՝ ոչ քրեաիրավական միջոցներով պայքարելու հնարավորությանը և արարքների քրեականացման գործընթացում ուշադրության արժանի այլ հանգամանքներին:

Այսպես՝ ակնհայտ է, որ կոռուպցիան իր ամենատարբեր դրսևորումներով մշտապես եղել և մնում է հասարակության լայն շերտերին անհարմարություն և անհանգստություն պատճառող, քաղաքացիների շրջանում վրդովմունքի, անապահովության և անարդարության զգացումներ առաջացնող երևույթ, որը ծնում է ապօրինությունների ու ամենաթողության միջավայր՝ արժեզրկելով ինչպես անհատի իրավունքների համալիրն ու արժանապատիվ կեցությունը, այնպես էլ հեղինակագրկելով պետությունն ու սպառնալիք ստեղծելով պետականության հիմքերի համար:

Կոռուպցիոն բնույթի հանցագործությունները, որոնք անմիջականորեն ոտնձգում են պետական համակարգի բնականոն գործունեությունն ապահովող հասարակական հարաբերությունների դեմ և սպառնալիք ստեղծում մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար, օժտված են բարձր հանրային վտանգավորությամբ: Դրանց բնորոշ է մեղքի դիտավորյալ ձևը և շահադիտական կամ անձնական շահագրգռվածության այլ նպատակը:

Ընդ որում, մեր երկրում կոռուպցիայի տարածվածության, տասնամյակներ շարունակ առկա համակարգային կոռուպցիոն երևույթների առկայության, հասարակության սոցիալական խիստ բևեռացվածության պայմաններում ինչպես ապօրինի հարստացման քրեականացման պահին, այնպես էլ այժմ առկա է հանրային պահանջ՝ հակակոռուպցիոն գործիքների առավել լայն կիրառմամբ պայքարել ապօրինի հարստացածների դեմ:

Այսպես՝ «Global Financial Integrity» միջազգային կազմակերպության կողմից 2015 թվականին հրատարակված «Չարգացող երկրներից ապօրինի ֆինանսական հոսքերի մասին» զեկույցի համաձայն՝ Հայաստանից 2004 թվականից մինչև 2013 թվականն ընկած ժամանակահատվածում ապօրինի կերպով դուրս է բերվել 9,833 միլիարդ դոլար, որը կազմում է տարեկան մոտավորապես 980 միլիոն դոլար⁷:

Կոռուպցիոն հանցագործությունների պաշտոնական վիճակագրական պատկերը և ս վկայում է երկրում կոռուպցիայի համընդգրկունության, կոռուպցիոն համակարգային երևույթների առկայության և դրա դեմ պայքարի արդյունավետության բարձրացման անհրաժեշտության մասին⁸:

Հատկանշական է, որ ապօրինի հարստացումը քրեականացնելու հնարավո-

⁷ Տե՛ս զեկույցը հետևյալ համացանցյին հղմամբ՝ https://secureservercdn.net/45.40.149.159/34n.8bd.myftpupload.com/wp-content/uploads/2015/12/IFF-Update_2015-Final-1.pdf (մուտք՝ 11.05.2023):

⁸ Տե՛ս կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների մասին հաղորդումները՝ <https://www.prosecutor.am/am/%D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%D6%84%D5%AF%D5%B8%D5%BC%D5%B8%D6%82%D5%BA%D6%81%D5%AB%D5%B8%D5%B6%D5%B0%D5%A1%D5%B6%D6%81%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%D6%84%D5%B6%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%D5%BE%D5%A5%D6%80%D5%A1%D5%A2%D5%A5%D6%80%D5%B5%D5%A1%D5%AC/> (մուտք՝ 11.05.2023):

րությունը քննարկելու առաջարկությամբ են հանդես եկել նաև կոռուպցիայի դեմ պայքարի հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունները՝ Հայաստանի վերաբերյալ տարբեր տարիներին հրապարակած զեկույցներում:

Այսպես՝ Եվրոպայի Խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ)՝ Հայաստանի վերաբերյալ չորրորդ գնահատման զեկույցում նշվում էր եկամուտների հայտարարագրման գործընթացում լուրջ իրավախախտումների դեպքում իշխանությունների կողմից քրեաիրավական պատժամիջոցների կիրառման անհրաժեշտության մասին, այդ թվում՝ հավանություն տալով ապօրինի հարստացման հանցանքի ներմուծմանը՝ իրավակիրառության կառուցակարգերի ամրապնդման նպատակով⁹:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) «Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի» 3-րդ շրջանի մոնիթորինգի զեկույցում Հայաստանին խրախուսվում էր հետագա վերլուծություններ իրականացնել ապօրինի հարստացման քրեականացման կարիքների և հնարավորությունների ուղղությամբ¹⁰:

Այսպիսով՝ **ապօրինի հարստացման՝ բարձր հանրային վտանգավորություն ունենալու հանգամանքը կասկածից վեր է, քանի որ ապօրինի հարստացման դեպքում ողջամտորեն ենթադրվում է, որ պաշտոնատար անձի գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը, որոնք էականորեն գերազանցում են անձի օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով, ձեռք են բերվել ապօրինի՝ վերջինիս ծառայողական դիրքն ու պաշտոնից բխող հնարավորություններն օգտագործելու արդյունքում, ինչի հետևանքով անմիջականորեն սպառնալիքի տակ է դրվել ինչպես պետական ծառայության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունների, այնպես էլ անձանց սեփականության և այլ վերաբերելի իրավունքների պաշտպանությունը:**

Ինչ վերաբերում է ապօրինի հարստացման դեմ այլ՝ ոչ քրեաիրավական միջոցներով պայքարելու հնարավորությանը, ապա այս հարցում պետությունները տարբեր մոտեցումներ են որդեգրել: Կան երկրներ, որոնք ապօրինի հարստացածների դեմ պայքարն իրականացնում են քրեաիրավական, կան երկրներ, որոնք ապօրինի հարստացման դեմ պայքարում են վարչաիրավական կամ քաղաքացիաիրավական հարթությունում:

Որոշ հեղինակներ այն տեսակետն են հայտնում, որ ապօրինի հարստացման

⁹ Տե՛ս Գրեկոյի՝ Հայաստանի վերաբերյալ չորրորդ գնահատման զեկույց, 2015 թվական, 232-րդ կետ: Հասանելի է հետևյալ համացանցային հղմամբ՝ <https://rm.coe.int/16806c2bd8> (մուտք՝ 11.05.2023):

¹⁰ Տե՛ս Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության «Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի» 3-րդ շրջանի մոնիթորինգի զեկույց, 2014 թվական: Հասանելի է հետևյալ համացանցային հղումով՝ <http://www.oecd.org/daf/anti-bribery/Armenia-Round-3-Monitoring-Report-ENG.pdf> (մուտք՝ 11.05.2023):

դեմ պայքարում քրեաիրավական միջոցները պետք է կիրառվեն որպես վերջին միջոց՝ հարկային օրենքները, քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցները, այդ թվում՝ քաղաքացիական բռնագրավումը, պետք է նախընտրելի լինեն¹¹:

Ապօրինի հարստացման դեմ պայքարի միջոցների ընտրության հարցում թերևս կարելի է համաձայնել Դ. Խաչատուրյանի այն դիտարկման հետ, որ ապօրինի հարստացումը քրեականացնող համապատասխան հոդվածի բացակայությունը պետությունների քրեական օրենսդրության մեջ պայմանավորված է՝ 1) նման հոդված ունենալու անհրաժեշտության բացակայությամբ՝ կապված ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող նախորդող հանցագործությունը բացահայտելու դատավարական միջոցների արդյունավետության, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված գույքը քրեաիրավական տիրույթից դուրս բռնագրավվելու հնարավորության հետ, և 2) ինստիտուցիոնալ ռեսուրսների առկայության հետ (այդ թվում՝ կամքի)՝ կապված նախորդող հանցագործությունը բացահայտելու հետ¹²:

Ապօրինի հարստացման հանցանքի և հանցավոր ճանապարհով ձեռք բերված ակտիվների բռնագրավման ինստիտուտի հարաբերակցության առումով ակնհայտ է, որ ապօրինի հարստացման դեմ պայքարը որպես վերջնարդյունք՝ պետք է միտված լինի ապօրինի ձեռք բերված գույքի բռնագրավմանը՝ հօգուտ օրինական տիրապետողի կամ պետության: Քրեաիրավական գործողության տիրույթում ապօրինի ձեռք բերված գույքի բռնագրավումն անխուսափելիորեն կապված է հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով անձի մեղավորության հաստատման հետ, ինչն ապօրինի հարստացման հանցակազմի իրավակիրառության ընթացքում ի հայտ եկող դժվարությունների հետ մեկտեղ որոշակիորեն բարդացնում է ապօրինի ձեռք բերված գույքի բռնագրավման գործընթացը: Թերևս սա է պատճառը, որ բազմաթիվ զարգացած երկրներ պաշտոնատար անձանց ապօրինի հարստացման դեմ պայքարն իրականացնում են քաղաքացիաիրավական հարթությունում՝ առավել գործուն և արդյունավետ կառուցակարգեր նախատեսելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագրավման համար:

Հատկանշական է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագրավումը քաղաքացիաիրավական գործողության տիրույթում արդեն իսկ իրողություն է նաև մեր իրավական համակարգում: Այսպես՝ ԱԺ կողմից 16.04.2020 թվականին ընդունվեց «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքը, որը կարգավորման է ենթարկում «առանց մեղադրական դատավճռի ակտիվների

¹¹ Տե՛ս, օրինակ, Համագործակցություն հանուն լավ կառավարման ծրագրի շրջանակներում ԵՄ և ԵԽ համատեղ սեմինարի նյութեր, 05.06.2018 թվական, Քիշնև, զեկուցողներ Ջոնաթան Ֆիշեր և Անիտա Գլիֆորդ:

¹² Տե՛ս Դ. Խաչատուրյան, Ապօրինի հարստացման և դրա նկատմամբ նախորդող հանցագործությունների ապացուցման առարկան, չափորոշիչն ու մեթոդները, Միջազգային գիտագործնական կոնֆերանսի նյութեր, 2017 թվական, Սարանսկ, էջեր 131-132:

բռնագանձման» (non-conviction based asset forfeiture) ինստիտուտը քաղաքացիական դատավարության շրջանակներում: Այն քրեական վարույթից դուրս իրականացվող գործընթաց է, որը հնարավորություն է տալիս օրենքում հստակորեն ամրագրված հիմքերի առկայության դեպքում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի արդյունքում դատարանի կողմից իրականացնել պաշտոնատար անձի կամ վերջինիս հետ փոխկապակցված անձի գույքի բռնագանձում՝ հօգուտ պետության:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք՝ կոռուպցիայի դեմ պայքարի ներկա փուլում ՀՀ-ում ապօրինի հարստացման դեմ քրեաիրավական միջոցներով պայքարելն արդարացված է՝ հաշվի առնելով այն, որ ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող հանցագործությունը բացահայտելու դատավարական միջոցները երբեմն սուղ են, իսկ քրեաիրավական տիրույթից դուրս ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման կառուցակարգերը մեր երկրում դեռևս կայացման փուլում են:

Այնուամենայնիվ, ապօրինի հարստացման քրեականացումը ինչպես աշխարհի շատ այլ երկրներում, այնպես էլ ՀՀ-ում միանշանակորեն չի ընդունվել և բազմաթիվ վեճերի ու տարաձայնությունների տեղիք է տվել: Ըստ այդմ, առաջարկում ենք անդրադառնալ մասնագիտական գրականության մեջ և իրավական հանրության կողմից ապօրինի հարստացման քրեականացմանը կողմ և դեմ ներկայացվող հիմնական փաստարկներին:

Ապօրինի հարստացման քրեականացմանը կողմ ներկայացվող փաստարկներն ու հիմնավորումները հիմնականում շեշտադրում են դրա՝ որպես հակակոռուպցիոն գործիքի արդյունավետությունը կոռուպցիայի դեմ պայքարի գործում այն դեպքերում, երբ կոռուպցիոն բնույթի այլ հանցագործությունները հնարավորություն չեն տալիս բացահայտել կոռուպցիոն դեպքը և իրականացնել քրեական հետապնդում: Նման պայմաններում ապօրինի հարստացման հանցանքը թույլ է տալիս քրեական վարույթի շրջանակներում հասնել հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագրավման:

Այսպես՝ ապօրինի հարստացման քրեականացմանը կողմ փաստարկները (հիմնավորումները) ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին.

- Ապօրինի հարստացումը հետևանքային հանցանք է, որը հնարավորություն է տալիս իրավակիրառողին իրավական գնահատական տալու անձի կատարած արարքին այն դեպքում, երբ, օրինակ, կաշառք ստանալու հանցակազմով քրեական գործի քննությունը մտնում է փակուղի կամ կաշառք ստանալու դեպքում առհասարակ քրեական հետապնդում հնարավոր չի լինում հարուցել անհրաժեշտ և բավարար ապացուցողական հենքի բացակայության պատճառով, քանի որ կաշառակերության դեպքում ապացույցների համակցության հավաքումը՝ կապված կաշառակերության գաղտնի բնույթով, հաճախ առանց փաստաթղթային հետքի, երբեմն օտարերկրյա

գործարքներ ընդգրկելով կատարված լինելու պայմաններում, երբեմն անիրագործելի է:

- Ապօրինի հարստացումը հաղթահարում է սպացուցողական խոչընդոտները՝ կապված կաշառակերության և կոռուպցիոն բնույթի մյուս հանցանքների հիմնավորման հետ, և հաստատված համարում հանրային ծառայողի կողմից հանցանքի կատարումը բոլոր այն դեպքերում, երբ հնարավոր չէ ողջամտորեն հիմնավորել վերջինիս եկամուտների էական աճը:
- Անհրաժեշտ չէ հիմնավորել, որ եկամուտների նշանակալից աճը որևէ այլ հանցանքի, օրինակ՝ կաշառակերության, հարկերի վճարումից չարամտորեն խուսափելու կամ այլ հանցանքի հետևանք է:
- Քանի որ սպօրինի հարստացման դեպքում քրեական հետապնդման ենթարկվելն ավելի հեշտ է, այն ավելի ուղիղ ճանապարհ է դեպի քրեական վարույթի շրջանակներում սպօրինի ձեռք բերված գույքի բռնագրավում:
- Այն կարևոր կանխարգելիչ և զսպող նշանակություն ունեցող գործիք է և ցույց է տալիս պետական պաշտոնյային, որ եթե վերջինս ներգրավված է կոռուպցիայի մեջ, կկորցնի իր պաշտոնը, սպօրինի ձեռք բերած ակտիվները, հասարակական դիրքը և, ի վերջո, ազատությունը:
- Ոչ բոլոր իրավունքներն են բացարձակ և այս դեպքում հանրային ոլորտում կոռուպցիայի հաղթահարումը գերակայում է մյուս վերաբերելի իրավունքների¹³:
- Ապօրինի հարստացման քրեականացումը՝ որպես հակակոռուպցիոն գործիք, հավանության է արժանանում տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից¹⁴ և այլն:
- Ապօրինի հարստացման քրեականացմանը դեմ փաստարկներն ու հիմնավորումները պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի.
 1. սպօրինի հարստացման հանցանքի և անմեղության կանխավարկածի ու դրա հետ սերտորեն փոխկապակցված՝ անձի լռելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքների միջև հակասությանը վերաբերող փաստարկներ:
 2. սպօրինի հարստացման հանցանքի՝ քրեական իրավունքի ընդհանուր սկզբունքներին հակասելու վերաբերյալ փաստարկներ:
 3. սպօրինի հարստացման արդյունավետ իրավակիրառությանը խոչընդոտող կամ դրա դժվար իրավակիրառությանը վերաբերող փաստարկներ:

¹³ Տե՛ս Համագործակցություն հանուն լավ կառավարման ծրագրի շրջանակներում ԵՄ և ԵԽ համատեղ սեմինարի նյութեր, 05.06.2018 թվական, Քիշնև, գեկուցողներ Չոնաթան Ֆիշեր և Անիտա Գլիֆորդ:

¹⁴ Տե՛ս The accumulation of unexplained wealth by public officials: Making the offence of illicit enrichment enforceable, Anti-corruption resource centre, U4 Brief, January 2012 N1
Հասանելի է՝ հետևյալ համացանցային հղումով՝ <https://open.cmi.no/cm/mixmlui/bitstream/handle/11250/2474912/The%20accumulation%20of%20unexplained%20wealth%20by%20public%20officials%3a%20Making%20the%20offence%20of%20illicit%20enrichment%20enforceable?sequence=1&isAllowed=y> (access 10.05.2023)

- Ապօրինի հարստացման քրեականացմանը դեմ փաստարկներն առաջին հերթին կապված են ապօրինի հարստացման հանցանքի հետ անմեղության կանխավարկածի սկզբունքի, ինչպես նաև դրա հետ սերտորեն փոխկապված՝ անձի լռելու ու իր դեմ ցուցմունք տալու պարտականությունից ազատված լինելու իրավունքների միջև հակասության հետ:

Աշխարհի շատ երկրներ խուսափում են ապօրինի հարստացման քրեականացումից՝ մատնանշելով հենց այն խոչընդոտները, որոնք կապված են անմեղության կանխավարկածի սկզբունքի իրացման հետ¹⁵:

Անմեղության կանխավարկածը մի շարք միջազգային-իրավական փաստաթղթերում ամրագրված հանրաճանաչ սկզբունք է: Այն իր ամրագրումն է ստացել նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում: Այսպես՝ համաձայն կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի՝ «Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական իրավախախտում կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան»:

Անմեղության կանխավարկածի սկզբունքը մի քանի բաղադրիչից է բաղկացած: Ապօրինի հարստացման ինստիտուտի հետ առերևույթ հակասություն կարող է առաջացնել այս սկզբունքի բաղադրատարր հանդիսացող այն գաղափարը, համաձայն որի՝ անձը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, անձի մեղավորությունն ապացուցելու պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը:

Հիշյալ դրույթն արդար դատաքննության բաղադրատարր հանդիսացող կարևոր երաշխիք է ինչը հնարավորություն է տալիս հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձին ապացուցման պարտականությունից ազատված լինելու պայմաններում, արդյունավետ կերպով իրացնել իր պաշտպանության իրավունքը: Միևնույն ժամանակ, անմեղության կանխավարկածը բացարձակ չէ, այն դիմամիկ սկզբունք է, և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը՝ որպես կոնվենցիայի կենդանի գործիք, տարբեր տարիներին կայացված վճիռներում զարգացրել է հիշյալ սկզբունքի իրավակիրառությունը: Մասնավորապես՝ ինչպես ցույց է տալիս Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը՝ այնպիսի բարձր հանրային վտանգավորություն և բարձր կազմակերպվածության մակարդակ ունեցող անդրազգային հանցագործությունների դեմ պայքարում, ինչպիսիք են թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը, կոռուպցիան, Եվրոպական դատարանը թույլ է տալիս պայմանականորեն ասված «նահանջ» անմեղության կանխավարկածի սկզբունքից և հնարավոր համարում ապացուցման բեռի տեղափոխումը մեղադրյալի վրա:

Այսպես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշակի բացառիկ դեպքերում համաչափության և ռացիոնալության սկզբունքների պահպան-

¹⁵ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի իրականացման վերանայում, 2013 թվական, Վիեննա:

ման պայմանով անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտում չի համարում ապացուցման բեռի տեղափոխումը մեղադրյալի վրա:

Այսպես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը խնդրո առակա հարցի առնչությամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- *գույքի հանցավոր ծագումը կարող է հաստատվել անուղղակի ապացույցների հիման վրա, այդ թվում՝ եզրահանգումներ անելով այն հանգամանքից, որ մեղադրյալը հրաժարվում է ներկայացնել բացատրություններ գույքի ծագման առնչությամբ*¹⁶,
- *քրեական գործերով արդար դատաքննության հայեցակարգի հետ համատեղելի է դիմումատուի վրա իր գույքային իրավիճակի վերաբերյալ հավաստի բացատրություններ տալու պարտականություն դնելը*¹⁷:

Որոշ հեղինակներ¹⁸ ապօրինի հարստացման դեպքում ապացուցման բեռի տեղափոխումը մեղադրյալի վրա արդարացնում են այն փաստարկմամբ, որ գույքի ենթադրյալ ապօրինի ծագման աղբյուրները մեղադրյալի իմացության շրջանակի մեջ են մտնում և, ըստ այդմ, քրեական հետապնդման մարմինները լուրջ ղօվարությունների առջև կկանգնեն այն բացահայտելու առումով:

Իրավաբանական գրականության մեջ¹⁹ ապօրինի հարստացման դեպքում մեղադրյալի վրա ապացուցման բեռի տեղափոխման հարցը քննարկելիս խոսվում է մեղադրյալի կողմից ապացուցման (ապօրինի հարստացումը ժխտելու) իրավաբանական (իրավական) և ապացուցողական պարտականության մասին: Իրավաբանական պարտականության դեպքում մեղադրյալը քրեական հետապնդման մարմնին պետք է «համոզի», որ իր ակտիվները բիսել են օրինական աղբյուրից, և ներկայացնի այն հավաստող ապացույցներ, իսկ այն դեպքում, երբ մեղադրյալը կրում է միայն ապացուցողական պարտականություն, բավարար է սոսկ այնպիսի փաստական տվյալների ներկայացումը, որոնք կհերքեն այն ենթադրությունը, որ ակտիվներն անօրինական ծագում ունեն: Եթե մեղադրյալը ցույց է տալիս իր եկամուտների օրինական ծագումը հիմնավորող ապացույցներ, ապա ապացուցման պարտականությունը մեխանիկորեն տեղափոխվում է քրեական հետապնդման մարմնի վրա, որը պետք է ապացույցի, որ եկամուտները

¹⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Ցյուշենն ընդդեմ Բելգիայի» գործով 2017 թվականի մայիսի 2-ի որոշումը, գանգատ 23572/07, կետեր 27-30:

¹⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Գրեյսոն և Բիրամն ընդդեմ Միացյալ թագավորության» գործով 2008 թվականի սեպտեմբերի 23-ի որոշումը, գանգատներ 19955/05 և 15085/06, կետեր 49, 23: Տե՛ս նաև, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Ցյուշենն ընդդեմ Բելգիայի» գործով 2017 թվականի մայիսի 2-ի որոշումը, գանգատ 23572/07, կետ 30:

¹⁸ Տե՛ս Չհիմնավորված հարստության քրեականացման հիմնախնդիրը. ապօրինի հարստացման հանցանքը և մարդու իրավունքների խախտումները, Ջիֆրի Բոլս, Օրենսդրություն և հանրային քաղաքականություն, [Նճ. 17:835 2014], էջ 868:

¹⁹ Տե՛ս Չհիմնավորված հարստության քրեականացման հիմնախնդիրը. ապօրինի հարստացման հանցանքը և մարդու իրավունքների խախտումները, Ջիֆրի Բոլս, Օրենսդրություն և հանրային քաղաքականություն, [Նճ. 17:835 2014], էջ 859-860:

ծագել են ապօրինի աղբյուրից, իսկ եթե մեղադրյալին չի հաջողվում ցույց տալ իր եկամուտների օրինական ծագումը, ապա քրեական հետապնդման մարմինը գալիս է այն եզրահանգման, որ ակտիվները ձեռք են բերվել ապօրինի: Այսինքն՝ ապացուցողական պարտականության դեպքում բավարար է միայն մեղադրյալի կողմից ողջամիտ կասկածի հարուցումը, որ եկամուտները ծագել են օրինական աղբյուրից, իսկ ողջամիտ կասկածից վեր ապացուցողական չափանիշով հարստացման ապօրինի լինելը հիմնավորելու պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը: Ապօրինի հարստացումը քրեականացրած շատ երկրներ շեշտում են, որ իրենց ներպետական օրենսդրությամբ մեղադրյալները կրում են միայն ապացուցողական պարտականություն, իսկ ապօրինի հարստացումը հիմնավորելու իրավաբանական պարտականությունը շարունակում է մնալ քրեական հետապնդման մարմնի վրա:

Այնուամենայնիվ, ինչպես ամերիկյան, այնպես էլ ռուսական իրավաբանական հանրույթը ներկայացնող որոշ հեղինակներ գտնում են, որ ապօրինի հարստացման հանցանքի իրավակիրառությունը անխուսափելիորեն առաջացնում է խնդրահարույց իրավիճակներ անմեղության կանխավարկածի սկզբունքի և իր դեմ ցուցմունք տալու պարտականությունից ազատված լինելու իրավունքի պահպանման առումով, քանի որ հանցանքն ինքնին ենթադրում է մեղադրյալի կողմից բացատրության ներկայացում, և անկախ այն հանգամանքից՝ մեղադրյալը կրում է ապացուցման իրավաբանական, թե ապացուցողական պարտականություն, երկու դեպքում էլ այն ենթադրում է հարստացման օրինականությունը հիմնավորող որոշակի փաստական տվյալների ներկայացում, ինչը մարդու իրավունքների խախտման հավանական ռիսկ է իր մեջ պարունակում²⁰:

Գտնում ենք՝ որոշ իրավիճակներում մեղադրյալի կողմից ապօրինի հարստացման մեղադրանքից պաշտպանվելը կարող է **անխուսափելիորեն** առաջացնել այնպիսի իրավիճակ, երբ մեղադրյալի կողմից իր տիրապետության տակ գտնվող ակտիվների օրինական ծագման վերաբերյալ բացատրությունը վկայի վերջինիս կողմից այլ հակաիրավական արարքների, օրինակ՝ հայտարարագրման ենթակա եկամտի կամ գույքի չհայտարարագրման, կամ կեղծ տվյալների հայտարարագրման կամ հարկերի վճարումից խուսափելու և այլ հակաիրավական արարքների կատարման մասին: **Նման իրավիճակներում մեղադրյալի իրավական վիճակը չփաստարացնելու և ապօրինի հարստացման մեղադրանքի շրջանակներում իր եկամտի ծագման աղբյուրների վերաբերյալ բացատրություն ներկայացնելու պրակտիկան խթանելու առումով կարևոր է քրեական դատավարության օրենսգրքում համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախաձեռնումը՝ մեղադրյալի վրա ապացուցման բեռի տեղափոխման հստակ կանոնների**

²⁰ Տե՛ս նախորդ հոդումը, նույն տեղում, ինչպես նաև Դ. Գ. Միխայլենկո, Ապօրինի հարստացումն ազգային օրենսդրություն ներմուծելու խոչընդոտները, Իրավունք և պետություն, N 4 (69), 2015, էջ 58:

ամրագրման հետ մեկտեղ քննարկման առարկա դարձնելով նաև համապատասխան լրացուցիչ երաշխիքների նախատեսման հարցը:

Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրության մեջ անմեղության կանխավարկածի սկզբունքի ամրագրմանը, ապա հատկանշական է, որ 2015 թվականին իրականացված սահմանադրական բարեփոխումների արդյունքում անմեղության կանխավարկածի սկզբունքը որոշակիորեն այլ ձևակերպմամբ է ամրագրվել: Այսպես՝ նախորդ՝ 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 21-րդ հոդվածի համաձայն՝ **«Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:**

Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփաստված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի»:

2015 թվականի խմբագրությամբ՝ Սահմանադրության 66-րդ հոդվածում անմեղության կանխավարկածի սկզբունքն ամրագրվել է հետևյալ բովանդակությամբ՝ **«Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:**

Փաստորեն, նոր խմբագրությամբ Սահմանադրության տեքստից հանվել են անմեղության կանխավարկածի սկզբունքի բովանդակության մաս կազմող դրույթներն առ այն, որ «մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը», և որ «չփաստված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի»: Նման սահմանադրական փոփոխությունների կատարման արդյունքում, ըստ էության, անմեղության կանխավարկածի սկզբունքի սահմանադրական ձևակերպումը «հարմարեցվեց» ապօրինի հարստացման հանցանքի՝ մեր իրավական համակարգ ներմուծմանը:

Ապօրինի հարստացման քրեականացմանը դեմ հաջորդ փաստարկը վերաբերում է քրեական իրավունքի ընդհանուր սկզբունքների հետ դրա հակասությանը: Այսպես՝ ապօրինի հարստացման հանցակազմի դեպքում, ըստ էության, չկա արարք, իսկ պաշտոնատար անձ լինելը և հարստության տիրապետելն ինքնին հանցավոր գործունեություն չէ²¹. այս առումով հանցանքը խոցելի է թվում իրավական որոշակիության տեսանկյունից:

Քրեականացմանը դեմ հաջորդ փաստարկները կապված են ապօրինի հարստացման հանցանքի իրավակիրառության ժամանակ ի հայտ եկող դժվարությունների հետ՝ կապված հանցանքի որակման, ապօրինի ակտիվների ծագման

²¹ Տե՛ս The Accumulation of Unexplained Wealth by Public Officials: Making the Offence of Illicit Enrichment Enforceable, Anti-corruption Resource Centre, U4 Brief, January 2012 N1.

Հասանելի է՝ հետևյալ համացանցային հղումով <https://open.cmi.no/cmi-xmlui/bitstream/handle/11250/2474912/The%20accumulation%20of%20unexplained%20wealth%20by%20public%20officials%3a%20Making%20the%20offence%20of%20illicit%20enrichment%20enforceable?sequence=1&isAllowed=y> (access 10.05.2023).

աղբյուրի բացահայտման, ապօրինի հարստացման հանցանքի ավարտի պահի, ապօրինաբար ձեռք բերված ակտիվների՝ բարեխիղճ ձեռք բերողի տիրապետության տակ անցնելու, անձի իրավական վիճակը վատթարացնող քրեական օրենքի՝ հետադարձ ուժով կիրառվելու անթույլատրելիության, ապօրինի հարստացման փաստը հիմնավորող անհրաժեշտ և բավարար ապացուցողական հենքի ձևավորման հետ և այլն:

Սրա հետ կապված՝ հատկանշական է, որ վերոնշյալ գործոնները չեն կարող որոշիչ լինել ապօրինի հարստացման քրեականացման անհրաժեշտության և դրա դեմ քրեաիրավական միջոցներով պայքարի ընտրության հարցում, քանի որ դրանք, ըստ էության, ապօրինի հարստացման դեպքի հայտնաբերման և բացահայտման գործընթացում ի հայտ եկող խոչընդոտներ կամ դժվարություններ են և, այստեղ տեղին է ևս մեկ անգամ հիշատակել Կուդրյավցևի դիտարկումն առ այն, որ «քրեականացում իրականացնելիս պետք է հաշվի առնել արարքի հանրային վտանգավորության աստիճանը, դրա տարածվածությունը, հասարակական հարաբերությունների զարգացման համար խոչընդոտ լինելը, այլ՝ **ոչ քրեաիրավական միջոցներով այդ արարքի դեմ պայքարի անարդյունավետությունը** կամ համանման հանրային վտանգավորություն ունեցող արարքների արդեն իսկ քրեականացված լինելու փաստը, ինչը ապացուցել է իր արդյունավետությունը»²²:

Ինչ վերաբերում է ինստիտուտի կիրառման արդյունավետությանը միջազգային մակարդակում, ապա 2009 թվականի նոյեմբերին ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիան վավերացրած անդամ-պետությունների կոնֆերանսի երրորդ նստաշրջանի արդյունքում ընդունվեց 3/3 բանաձևը (Ակտիվների վերականգնում), որի 13-րդ կետը անդամ-պետություններին հորդորում էր իրականացնել հետագա ուսումնասիրություն և վերլուծություններ ակտիվների վերականգնման գործողությունների արդյունքների վերաբերյալ և, ըստ անհրաժեշտության, թե ինչպես կարող են իրավական կանխավարկածները, ապացուցման բեռի տեղափոխման միջոցները և ապօրինի հարստացման քննությունը նպաստել կոռուպցիոն հասույթի վերականգնմանը:

Հիշյալ կոչին ի պատասխան՝ առաջին խոր վերլուծությունը Գողացված ակտիվների վերականգնման նախաձեռնության (STAR) և Համաշխարհային բանկի կողմից համատեղ 2012 թվականին իրականացված «Ապօրինի հարստացման քրեականացմամբ կոռուպցիայի դեմ պայքարի» ձեռնարկն²³ է: Հիշյալ ուսումնասիրությամբ ապօրինի հարստացումը քրեականացրած պետությունների փորձի վերլուծության հիման վրա հեղինակների կողմից եզրահանգումներ են կատար-

Տե՛ս Кудрявцев В.Н. Уголовная политика и нормотворчество / В.Н. Кудрявцев // Уголовное право России. Общая часть: учебник / под ред. В.Н. Кудрявцева [и др.]. М.: Юрист, 2003., էջ 28-46:
²³ Տե՛ս On the take Criminalizing Illicit Enrichment to Fight Corruption, Lindy Muzila, Michelle Morales, Marianne Mathias, Tammar Berger, 2012:

վել դրա՝ որպես հակակոռուպցիոն գործիքի արդյունավետության վերաբերյալ՝ փաստելով, որ «Պատշաճ իրավական և ինստիտուցիոնալ երաշխիքների պահպանման պայմանով ապօրինի հարստացման վերաբերյալ դրույթները կարող են արդյունավետ գործիք լինել, որը կգործի արդարացիորեն: Այս առումով պետություններին ուղղված մարտահրավեր է՝ զարգացնել ինստիտուցիոնալ կարողությունները՝ ամրապնդելու անկախությունը և զգոն լինել՝ կանխելու հնարավոր չարաշահումները (...):»²⁴:

Եզրակացություն

Ելնելով վերոգրյալից՝ ակնհայտ է, որ պաշտոնատար անձանց ապօրինի հարստացման դեմ պայքարը՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի կարևոր և առանցքային տարր, առաջնային նշանակություն ունի: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով մեր երկրում տասնամյակներ շարունակ արմատացած համակարգային կոռուպցիոն երևույթների առկայությունը, ինչպես նաև ներկայումս ՀՀ իշխանությունների քաղաքական կամքը կոռուպցիայի դեմ պայքարի գործում, գտնում ենք՝ ապօրինի հարստացման դեմ պայքարը ևս նոր բովանդակություն է ձեռք բերում: **Նման պայմաններում առաջնային պլան է մղվում ապօրինի հարստացման դեմ պայքարի արդյունավետությունը՝ նախ և առաջ միտված պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար ձեռք բերված գույքը հետ վերադարձնելու կառուցակարգերի կատարելագործմանը:**

Ըստ այդմ, գտնում ենք՝ որ ապօրինի հարստացման հանցակազմի կատարելագործումը՝ ուղղված դրա արդյունավետ իրավակիրառության համար անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելուն, կարևոր նշանակություն է ձեռք բերում և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի գործողության հետ միաժամանակ կարող է լուրջ արդյունքներ գրանցել կոռուպցիայի դեմ պայքարի գործում:

²⁴ Տե՛ս նախորդ հղումը՝ 39-րդ էջ:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության 2014-2017թթ. ծրագիրը՝ հետևյալ համացանցային հղմամբ՝ <https://www.gov.am/files/docs/1321.pdf> (մուտք՝ 11.05.2023).
The 2014-2017 Program of the RA Government, approved by the RA Government's Decision No. 511-A of May 19, 2014. Available at the following web link: <https://www.gov.am/files/docs/3133.pdf> (access 11.05.2023).
2. ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության 2019 թվականի ծրագիրը: Հասանելի է հետևյալ համացանցային հղումով՝ <https://www.gov.am/files/docs/3133.pdf> (մուտք՝ 11.05.2023).
The 2019 Program of the RA Government, approved by the RA Government's dDecision No. 65-A of February 8, 2019. Available at the following web link: <https://www.gov.am/files/docs/3133.pdf> (access 11.05.2023).
3. Սարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Ջյուշենն ընդդեմ Բելգիայի» գործով 2017 թվականի մայիսի 2-ի որոշումը, գանգաստ 23572/07, կետեր 27-30.
The decision of the European Court of Human Rights in the case of Csyuschen v. Belgium of May 2, 2017, Application no. 23572/07, paragraphs 27-30.
4. Սարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Գրեյսոն և Բարնհամն ընդդեմ Միացյալ թագավորության» գործով 2008 թվականի սեպտեմբերի 23-ի որոշումը, գանգաստներ 19955/05 և 15085/06, կետեր 49, 23.
The decision of the European Court of Human Rights in the case of Grayson and Barnham v. United Kingdom, Application no. 19955/05 and 15085/06, paragraphs 49, 23.
5. Кудрявцев В.Н. Уголовная политика и нормотворчество / В.Н. Кудрявцев // Уголовное право России. Общая часть: учебник / под ред. В.Н. Кудрявцева [и др.]. М.: Юрист, 2003, էջ 28-46.
Kudryavtsev V.N. Criminal policy and norms // Criminal law of Russia.. General part: textbook / V.N. Kudryavtseva [and others]. — M. Jurist, 2003, pages 28-46.
6. Lindy Muzila, Michelle Morales, Marianne Mathias, Tammar Berger. “On the take Criminalizing Illicit Enrichment to Fight Corruption”, 2012.
7. Դ. Խաչատուրյան, Ապօրինի հարստացման և դրա նկատմամբ նախորդող հանցագործությունների սպառնուցման առարկան, չափորոշիչն ու մեթոդները, Միջազգային գիտագործնական կոնֆերանսի նյութեր, 2017 թվական, Սարանսկ:
D. Khachaturyan “The Object, Criteria and Methods of Proving Illicit enrichment and Crimes Preceding it”, Proceedings of the International Scientific and Practical Conference, 2017, Saransk.

8. Դ. Գ. Միխայլենկո, «Ապօրինի հարստացումն ազգային օրենսդրություն ներմուծելու խոչընդոտները», Իրավունք և պետություն, N 4 (69), 2015, էջ 58.
D. C. Mykhailenko, “Obstacles for introducing illicit enrichment in national legislation”, Law and State, N 4 (69), 2015, p. 58..
9. Ջիֆրի Բոլս, Չհիմնավորված հարստության քրեականացման հիմնախնդիրը. ապօրինի հարստացման հանցանքը և մարդու իրավունքների խախտումները, Օրենսդրություն և հանրային քաղաքականություն, [Vol. 17:835 2014].
Jeffrey Boles “Criminalizing the Problem of Unexplained Wealth: Illicit Enrichment Offenses and Human Rights Violations” Legislation and Public Policy [Vol. 17:835].
10. 10. The Accumulation of Unexplained Wealth by Public Officials: Making the Offence of Illicit Enrichment Enforceable, Anti-corruption Resource Centre, U4 Brief, January 2012 N1. Available at the following web link: (access 11.05.2023) <https://open.cmi.no/cmi-xmloi/bitstream/handle/11250/2474912/The%20accumulation%20of%20unexplained%20wealth%20by%20public%20officials%3a%20Making%20the%20offence%20of%20illicit%20enrichment%20enforceable?sequence=1&isAllowed=y>
11. «Համագործակցություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում ԵՄ և ԵԽ համատեղ սեմինարի նյութեր, 05.06.2018 թվական, Քիշնև, զեկուցողներ Ջոնաթան Ֆիշեր և Անիտա Գլիֆորդ:
Materials of Workshop of the EU-CE Joint Workshop on Cooperation for Good Governance, 05.06.2018, Chisinau, rapporteurs Jonathan Fisher and Anita Glifford.
12. «Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի հիմնավորումը՝ հետևյալ համացանցային հղումով <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=8445&Reading=0> (մուտք՝ 11.05.2023).
Justification of the draft law “On Amendments to the Criminal Code” at the following Internet link: <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=8445&Reading=0>. (access 11.05.2023).
13. «Global Financial Integrity» միջազգային կազմակերպության կողմից 2015 թվականին հրատարակված՝ «Չարգացող երկրներից ապօրինի ֆինանսական հոսքերի մասին» զեկույց՝ հետևյալ համացանցային հղմամբ՝ https://secureservercdn.net/45.40.149.159/34n.8bd.myftpupload.com/wp-content/uploads/2015/12/IFF-Update_2015-Final-1.pdf (մուտք՝ 11.05.2023).
Report “On Illicit Financial Flows from Developing Countries” published by the International Organization “Global Financial Integrity” in 2015 with the following link: https://secureservercdn.net/45.40.149.159/34n.8bd.myftpupload.com/wp-content/uploads/2015/12/IFF-Update_2015-Final-1.pdf (access 11.05.2023).
14. Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների մասին հաղորդումը, որը հրատարակվում է ՀՀ դատախազության պաշտոնական կայքէջում: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://www.prosecutor.am/am/>

D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%D6%84-%D5%AF%D5%B8%D5%BC%D5%B8%D6%82%D5%BA%D6%81%D5%AB%D5%B8%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B6%D6%81%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D6%84%D5%B6%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%BE%D5%A5%D6%80%D5%A1%D5%A2%D5%A5%D6%80%D5%B5%D5%A1%D5%AC/ (մուսք` 11.05.2023).

The report on the results of the investigation of corruption crimes, which is published on the official website of the RA Prosecutor’s Office. Available at the following link: <http://www.prosecutor.am/am/%D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%D6%84-%D5%AF%D5%B8%D5%BC%D5%B8%D6%82%D5%BA%D6%81%D5%AB%D5%B8%D5%B6%D5%B0%D5%A1%D5%B6%D6%81%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D6%84%D5%B6%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%BE%D5%A5%D6%80%D5%A1%D5%A2%D5%A5%D6%80%D5%B5%D5%A1%D5%AC/> (access 11.05.2023).

- 15. Գրեկոյի Հայաստանի վերաբերյալ չորրորդ գնահատման զեկույց, 2015 թվական, 232-րդ կետ: Հասանելի է հետևյալ համացանցային հղմամբ՝ <https://rm.coe.int/16806c2bd8> (մուսք` 11.05.2023).

Greco Fourth Assessment Report on Armenia, 2015, paragraph 232. Available at the following link: <https://rm.coe.int/16806c2bd8> (access 11.05.2023).

- 16. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության «Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի» 3-րդ շրջանի մոնիթորինգի զեկույց, 2014 թվական. Հասանելի է հետևյալ համացանցային հղումով՝ <http://www.oecd.org/daf/anti-bribery/Armenia-Round-3-Monitoring-Report-ENG.pdf> (մուսք` 11.05.2023).

3rd Monitoring Report of the Organization for Economic Co-operation and Development Istanbul Anti-Corruption Action Plan, 2014. Available at the following web link: <http://www.oecd.org/daf/anti-bribery/Armenia-Round-3-Monitoring-Report-ENG.pdf> (access 11.05.2023).

- 17. ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի իրականացման վերանայում, 2013 թվական, Վիեննա.

Review of the implementation of the UN Convention against Corruption, 2013, Vienna.

Alisa Amirkhanyan

*Senior Prosecutor at the Department of Organization,
Supervision and Legal Assistance of the Prosecutor
General's Office of the Republic of Armenia,
Third Rank Counsellor of Justice,
Degree applicant of the Department of Criminal Law, Faculty of Law,
Yerevan State University*

ILLICIT ENRICHMENT AS AN INSTRUMENT IN THE FIGHT AGAINST CORRUPTION¹

Abstract

With its various manifestations, corruption has always been and remains a phenomenon that causes discomfort and anxiety for the wide layers of society, causes indignation, insecurity and injustice among citizens, which creates lawlessness and permissiveness, devaluing both the complex of individual rights and dignified life, as well as discrediting the state, posing a threat to the foundations of statehood.

As a result of the change in the socio-political situation in our country in recent years, the fight against corruption, due to the unprecedented political will to fight corruption, has gained new momentum and content. Accordingly, the prevention of corruption and the fight against it in the Republic of Armenia have been declared as priorities of strategic importance.

In such circumstances, it is important to introduce new internationally accepted instruments for combating corruption and to continue to improve them, aimed at combating corruption in the civil, administrative and criminal spheres.

In this context, the analysis of the crime of illicit enrichment is more than important, considering its new and still insufficiently studied nature for our legal system.

In the article, an attempt was made to justify the need to fight against illicit enrichment with criminal legal measures in the context of the perception of corruption in RA, its level and prevalence, the international obligations assumed by RA, international best practices, the possibility and effectiveness of fighting against illicit enrichment in RA with other, non-criminal legal means.

Accordingly, the article refers to the need for criminalization of illicit enrichment in RA, presents the main arguments for and against the criminalization of illicit enrichment, as well as conclusions regarding the justification of criminalization of illicit enrichment in RA.

Keywords: illegal enrichment; fight against corruption; criminalization; presumption of innocence; property of illegal origin.

¹ The article was presented on 12.05.2023 and was reviewed on 10.10.2023.

Алиса Амирханян

*Старший прокурор управления по организации, контролю и правовому обеспечению
Генеральной прокуратуры Республики Армения,
советник юстиции третьего класса,
соискатель кафедры уголовного права юридического факультета
Ереванского государственного университета*

НЕЗАКОННОЕ ОБОГАЩЕНИЕ КАК ИНСТРУМЕНТ БОРЬБЫ С КОРРУПЦИЕЙ¹

Абстракт

Коррупция в различных своих проявлениях всегда была и остается явлением, причиняющим дискомфорт и тревогу широким слоям общества, вызывающим возмущение, чувство неуверенности и несправедливости у граждан, что создает атмосферу беззакония и вседозволенности, обесценивая комплекс прав личности и достойное проживание, дискредитируя государство и создавая угрозу для основ государственности.

В результате изменения в последние годы общественно-политической обстановки в нашей стране, борьба против коррупции, благодаря беспрецедентной политической воле к борьбе с коррупцией, обрела новый импульс и содержание. Следовательно, предотвращение коррупции и борьба с ней в Республике Армения объявлены в качестве приоритетов стратегического значения.

В подобных условиях становится важным внедрение новых международно признанных инструментов борьбы против коррупции и их постоянное совершенствование, направленное на противодействие коррупции как в гражданско-правовой, административно-правовой, так и в уголовно-правовой сферах.

В этом контексте анализ преступления незаконного обогащения является более чем важным, учитывая его новый и еще недостаточно изученный характер для нашей правовой системы.

В статье предпринята попытка обосновать необходимость борьбы с незаконным обогащением уголовно-правовыми средствами в контексте восприятия коррупции в РА, ее уровня и распространенности, международных обязательств, взятых на себя РА, лучшего международного опыта, возможности и эффективности борьбы с незаконным обогащением в РА другими, не уголовно-правовыми средствами. Следовательно, в статье говорится о необходимости криминализации незаконного обогащения в РА, приводятся основные аргументы за и против криминализации незаконного обогащения, а также выводы относительно обоснованности криминализации незаконного обогащения в РА.

Ключевые слова: незаконное обогащение; борьба с коррупцией; криминализация; презумпция невиновности; имущество незаконного происхождения.

¹ Статья была представлена 12.05.2023 и прошла рецензирование 10.10.2023.